№ 204 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18 № 204

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.
Ամսական Մէկ րուբլի

Ամերիկա տարեկան	.	6 դօլլար
Եւրօպա »	. .	30 ֆրանկ
Պարսկաստան »	.	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	. . .	40 կոպ.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. Գ. Դանիէլ-Բէկ
Ընդունելութիւնը: Առաւօտեան 10—2 ժամը, Երեկոյեան 4—6 »
Հասցէ՝ Ртищевская ул., д. № 7.
(ե. հ. շ.) ա. 50—6

Կովկասեան Հայոց
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
հնարաւորութիւն չունենալով բաւարարութիւն տալ իրան դիմող բոլոր չքաւոր Թիւրքահայերին, որոնք վերադառնում են հայրենիք, յայտարարում է, որ այդպիսի կարօտեալներին օգնել ցանկացողները կարող են իրանց նպաստներն ուղղել ընկերութեան գրասենեակը ամէն օր, առաւօտեան ժամը 9-ից մինչև 3-ը—Абасъ-Абадская пл., соб. домъ, № 7.
(ա.) (ա. օ.) 5—2

ԴԵՄԱԳՕԳԻԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Թիւրքիայի հայերը ունեն «Ազգային Սահմանադրութիւն» անունով ներքին ինքնավարութեան մի կանոնադրութիւն, որ, պահպանելով հանդերձ հայոց պատրիարքների գոյութիւնը, կարողացել է ենթարկել ազգային եկեղեցական-դպրոցական-կալուածական-դատաստանական բոլոր գործերը—որոնք առաջ պատկանում էին պատրիարքի բացարձակ իրաւասութեան—ազգային մի օրէնսդիր վարչութեան իրաւասութեան: Ազգային Երեսփոխանական Ժողովը, որի մէջ պատրիարքը միայն պատւաւոր նախագահի դեր է կատարում, որովհետև իսկական նախագահը ատենապետ անուամբ, երեսփոխաններից մէկն է լինում, տնօրինում է ազգային-եկեղեցական բոլոր գործերը: Այդ կանոնադրութիւնը վերջին 15—20 տարվայ ընթացքում դադարեցված էր սուլթան Համիդի ձեռքով, բայց այժմ նա վերականգնված է իր ամբողջութեամբ և Թիւրքիայի հայութիւնը վերստացել է իր ներքին գործերի ինքնավարութեան իրաւունքը:

Անշուշտ, այդ կանոնադրութիւնը ունի թերութիւններ. անշուշտ, նա կատարելապէս չէ արտայայտում ժողովրդական ներկայացուցչութիւնը, նա չէ դրված դեմօկրատական լայն հիմունքների վրա. բայց այդ թերութիւնները կարելի է ուղղել, լրացնել, մտցնելով հետզհետէ կատարելագործութիւններ վարչական մեխանիզմի մէջ և փոփոխելով անկատար յօդուածները նորերով:

Բայց վեր կենալ և քարոզել, թէ պէտք է վերացնել պատրիարքութիւնը, պէտք է վերացնել Ազգային Երեսփոխանական Ժողովը և ազգային գործերի ղեկավարութիւնը յանձնել անլեգալ մարմինների, ստուերի և մթի մէջ գործող, հասարակական և ժողովրդական որևէ կօնտրօլից ազատ յեղափոխական տարրերին — դա մի այնպիսի աբսուրդ, մի այնպիսի անհեթեթութիւն է, որ որակելն անգամ դժուար է:

Եւ սակայն Կ. Պօլսի հայ մամուլի մէջ գտնվել է մի օրգան, որ հանդէս է եկել այդպիսի անհեթեթ քարոզութեամբ: Այդ օրգանը «Մանզումէի Էֆքեար» թերթն է, որ վերջերս բաւական տխրահռչակ դարձաւ իր մի շարք ագեղ վարմունքով և մանաւանդ յոյների դէմ գործած յարձակումներով:

Այդ թերթը, որ միևնոյն էջի վրա երբեմն բոլորովին հակասող մտքեր է քարոզում, օգոստոսի 9-ի իր համարում «Ճշմարիտ ազատամիտներուն» վերնագրով մի յօդուածի մէջ ամենաֆանատիկոս ոգևորութեամբ և հիացմունքով գրուատելով էջմիածինը իբրև «Հայոց նոճքին և ազգութեան յոյս սփռած, կեանք տուած, գոյութիւնը պահպանած, քար ու հողը համբուրելի պաշտելի նուիրական վայր»—յանկարծ մի երկու տող ներքև յորդորում է Թիւրքիայի հայերին վերացնել Կ. Պօլսի պատրիարքութիւնը և ազգային ժողովները և հայերի քաղաքական ներքին գործերի ղեկավարութիւնը թողնել հայ յեղափոխականների վարիչ տարրերին:

Ազգային օրէնսդիր, լեգալ վարչութիւնը վերացնել և նրա տեղ դնել մի անլեգալ, իր բնոյթով և էութեամբ կեանքի մէջ իբրև աննօրմալ և արտաքին երևոյթ նկատված մարմին, որի գործունէութիւնը չէ կարող ենթակայ լինել ոչ մի կօնտրօլի, ոչ մի քննութեան, որի գոյութիւնը ընդունելի է միայն կրիտիկական բոպէներում և շրջաններում—դա, կրկնում ենք, այնպիսի մի անհեթեթ միտք է, որին ընդունակ կարող է լինել միայն հոռհոռական տրամաբանութիւնը:

Մենք համոզված ենք, որ ամեն մի յուրջ յեղափոխական կազմակերպութիւն ինքն էլ անհեթեթ կընդունի այդ միտքը: Եւ Կ. Պօլսի հոռհոռական թերթը թէև օրինակ է բերում ժէօն-Թիւրքերին, բայց հէնց ժէօն-Թիւրքերի ցոյց տուած օրինակը միանգամայն հերքում է նրա ասածը: Ժէօն-Թիւրքերը, ինչպէս յայտնի է, բոլորովին հեռու են պահում իրանց երկրի վարչութեան և կառավարութեան մասնակցելուց. Նրանք չեն վերցնում ոչ օսմանեան պարլամենտը, ոչ օսմանեան մինիստրութիւնը, ոչ դատարանները և իրանց ձեռքը չեն առնում այդ վարչութիւնները: Լեգալ, օրինական վարչութիւնները, դատարանները, ատեանները առաջվայ նման գոյութիւն ունեն, գործում են, պաշտօնավարում են: Ժէօն-Թիւրքերը աշխատում են միայն բարեփոխել, վերանազմել այդ վարչութիւնները, ատեանները ազատամիտ, սահմանադրական սկզբունքներով:

Եւ աշխարհի մէջ ոչ մի տեղ չէ տեսնված, որ մի երկրի կառավարութիւնը, վարչութիւնը գտնվի անլեգալ, յեղափոխական մարմինների ձեռքում: Այս և այն կուսակցութիւնը եթէ կարողանում է գերակշիռ դեր խաղալ երկրի վարչութեան մէջ, դարձեալ դա կատարվում է այն դէպքում, երբ այդ կուսակցութիւնը օրինական, լեգալ ճանապարհով ձեռք է բերում վարչութեան ղեկը:

Վերացնելով օրէնսդիր, լեգալ վարչութիւնը, վերացնելով պատրիարքարանը և Ազգային Երեսփոխանական Ժողովը, դուք ստեղծում էք մի կատարեալ անարխիա, որովհետև յանձնել ազգային գործերի վարչութեան ղեկը անլեգալ, յեղափոխական տարրերի ձեռքը, որոնք ենթակայ չեն ոչ մի կօնտրօլի և ժողովրդական վերահսկողութեան, դա նշանակում է խաւարեցնել սահմանադրական կեանքի ամենափոքր նշոյլն անգամ:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուս ժողովրդի միութիւնը Պետական Դումայի անդամ կոմս Դօրրերի միջոցով ներկայացնում է Դումային հարցապնդում թէ յայտնի է, արդեօք, այն պատրաստութիւնների մասին, որ տեսնում են յեղափոխականները ձմեռը և առաջիկայ գարնանը ակտիվ գործունէութիւն սկսելու համար:

Ռուս ժողովրդի միութեան նախագահ Դուբրովինը, ինչպէս հաղորդում են, դիմել է միութեան գաւառական բաժանմունքներին մի շրջաբերական հրահանգով, որտեղ ասում է. «Պատրաստ եղէք ամեն բանի, սպասեցէք»:

Պետական Դումայի քարտուղար Սազոնովիչը յայտնել է, որ հրաժարվում է քարտուղարի պարտականութիւններից: Այդ պաշտօնի համար թեկնածու է համարվում Չելնօկօվը, երկրորդ Դումայի քարտուղարը: («Б.», «К.»)

«Каспій» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից:

Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Թիւրքիայի ներկայացուցիչները բողոք են յայտնել բօլգարական կառավարութեանը արևելեան երկաթուղին գրաւելու առիթով:

Հիմի փաշան երիտասարդ-թիւրքերի կօմիտէտի պահանջով ազատել է կալանաւորութիւնից բօլգարական հրոսախմբերի պարագլուխ Սանդանսկուն:

Բօլգարական կառավարութիւնը արևելեան երկաթուղու գրաւման առիթով Աւստրիայի ներկայացրած բողոքին պատասխանել է այն մտքով, որ Բօլգարիան պատրաստ է վերադարձնելու երկաթուղին ընկերութեանը այն պայմանով, եթէ Թիւրքիան կերաշխաւորէ, որ երկաթուղու գործադուլները այլ ևս չեն կրկնվի: Այն դէպքում, եթէ Թիւրքիան չէ կարող կամ չի ցանկանայ պահանջված երաշխաւորութիւնը տալ, այն ժամանակ Բօլգարիան այդ երկաթուղին կը պահէ իր ձեռքում:

Վիէննայում տեղեկութիւն է ստացվել, որ Թիւրք կառավարութիւնը ամենայն օր զօրքեր, ռազմամթերքներ ու թնդանօթներ է ուղարկում բօլգարական սահմանագլուխը: («Кс.»)

Վիէննա, 16 սեպտեմբերի

«Pol. Cor.»-ին բօլգարական տեղեկ աղբիւրներից հաղորդում են, որ բօլգարական կառավարութիւնը մտադիր է հաշտութեամբ լուծել այն տարաձայնութիւնները, որոնք ծագեցին արևելեան երկաթուղածի մասը բօլգարների ձեռքով գրավելուց, և ընդամին ուշադրութեան առնել բոլոր շահախնդիր անձերի օրինաչափ պահանջները: Հարցի լուծման աւելի հաւանական միջոց, ընդհանուրի կարծիքով, այն կը լինի, որ բօլգարական կառավարութիւնը յետ գնէ երկաթուղային վարչութեանը պատկանող շահերի իրաւունքը: Առ այժմ Սօֆիայում հիմք չը կայ ենթադրելու, թէ Բ. Դուռը այժմեան հանգամանքներում իր կողմից էլ աջակցութիւն ցոյց չի տայ երկաթուղագծի վարչութեան խաղաղասէր կերպով լուծելու ամենահիշդ քաղաքականութեան հարցը: («Հ. Գ.»)

Լոնդոն, 16 սեպտեմբերի

Բէյտէրի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, անգլիական կառավարութիւնը յայտնել է Բօլգարիային, որ նրա կարծիքով արևելեան երկաթուղագծի գրաւման շարունակութիւնը չէ կարող արդարացում գտնել: («Հ. Գ.»)

Լոնդոն, 16 սեպտեմբերի

Տօկիօյից սեպտեմբերի 15-ին հեռագրում են, որ ճապօնական կառավարութիւնը այլ ևս անհրաժեշտ չէ գտնում բազմաթիւ զօրաբանակներ պահել Հիւսիսային Չինաստանում և որոշել է յետ կանչել այնտեղ գտնվող ճապօնական զօրքերի մեծ մասը, պահելով միայն մի փոքր թիւ Պէկինում, Տեանցզինում և Ճանխայգուանում: («Հ. Գ.»)

Պարիզ, 16 սեպտեմբերի

Գեներալ դ'Ամադ հեռագրում է զինւորական մինիստրին Կազաբլանկում սեպտ. 12-ին տեղի ունեցած միջնադէպի առիթով, որ, հակառակ յամառութեամբ տարածվող լուրերին, երբ նրա զինւորները առաջին վիրաւորանք հասցրին գերմանական հիւպատոսարանի պաշտօնեային, նրանք, ընդհակառակն, իրանք ենթարկվեցին դրան քարտուղարի կողմից:

Հաւասի գործակալութեան տեղեկութիւններին նայած, Պիշօնը սեպտ. 15-ին, երեկոյեան, ընդունեց գերմանական հաւատարմատար բարօն Լանկէնին, որի հետ խօսակցեց Կազաբլանկում պատահած միջնադէպի մասին: Երկու կողմից արտայայտվեց մեծ նախազգուշութիւն: Պիշօնը նկատեց, որ բանակցութիւններից առաջ այդ հարցի առիթով հարկաւոր է մանրամասնօրէն ծանօթանալ փաստերի հետ: Դ'Ամադից պահանջված է մանրամասն տեղեկութիւն եղածի մասին: («Հ. Գ.»)

Քութայիս, 16 սեպտեմբերի

Սեպտեմբերի 15-ի գիշերը ժողովրդական դպրոցների տեսչի բնակարանում ռումբ նետեցին: Վնասվածներ չը կան: Չարագործները փախան: («Հ. Գ.»)

Բօմբէյ, 16 սեպտեմբերի

Ուժեղ հեղեղը, որ տևեց մօտ մէկ և կէս օր, սոսկալի աւերածութիւններ գործեց Հայդէրաբադի շրջանում: Դեկանում (Մէյ գետի վրա) ջուրը տարել է մի քանի կամուրջներ, կործանել է մի քանի հազար տներ: Մարդկային զոհերի թիւը մեծ է: («Հ. Գ.»)

Սօֆիա, 16 սեպտեմբերի

Լոնդոնի դիպլոմատիական գործակալ Մինչէվիչը Բէյտէրի թղթակցի հետ այցելութիւն անելու պատճառով հեռագրով կանչված է Սօֆիա: («Հ. Գ.»)

Հռոմ, 16 սեպտեմբերի

Ստեֆանիի տեղեկութիւնների համաձայն, սեպտ. 13-ին ֆրանսիական և սպանիական հաւատարմատարներին յանձնված նօտայում կառավարութիւնը միանում է ֆրանսիական և սպանիական կառավարութեանց հայեցակէտին, որ ցանկալի է այդ գործում Մարօկկօյի վերաբերմամբ ունենալ բոլոր պետութիւնների լիակատար համաձայնութիւնը և համերաշխութիւնը: Ինչ վերաբերում է այն երաշխաւորութեանց, որոնք պէտք է պայմանաւորեն նոր սուլթանի ճանաչելը, իտալական կառավարութիւնը բացէ ի բաց անհրաժեշտ է գտնում, որ Մուլէյ-Հաֆիզը պաշտօնապէս յայտարարէ, որ նա կը հետևէ ալժէզիրասեան արձանագրութիւնների բոլոր պահանջներին:

Իտալական կառավարութիւնը կարծում է, որ նոր սուլթանը չը պէտք է ամենափոքրիկ կասկածի անգամ տեղիք տայ պետութեան ներսը, ինչպէս նաև մեծ պետութիւնների նկատմամբ, թէ հաստատ մտադիր չէ յարգել միջազգային պարտականութիւնները, որ բղխում են իր գահ նստելու փաստից: Նկատի առնելով այն դժուարութիւնները, որոնք Մարօկկօյի ներքին դրութեան պատճառով արգելք են լինում այդ պարտականութիւնները անմիջապէս կատարելուն, իտալական կառավարութեան կարծիքով՝ աւելի նպատակայարմար է աջակցել նոր սուլթանին դիւրացնելու նրա նպատակները այն սահմաններում, որոնք հաստատվելու են մեծ պետութիւնների, ի թիւս որոնց և Ֆրանսիայի ու Սպանիայի շահերին համապատասխան կերպով: («Հ. Գ.»)

Դէզիօ, 16 սեպտեմբերի

Արտաքին գործերի մինիստր Իզվօլսկու և Տիտտօնիի տեսակցութիւնը կրում էր վերին աստիճանի բարեկամական բնաւորութիւն և վկայեց, որ երկու պետութիւնների հայեացքները միևնոյնն են քաղաքական խոշոր հարցերի վերաբերութեամբ: Այդ տեսակցութիւնից երևաց, որ Ռուսաստանի և Իտալիայի յարաբերութիւնները աւելի մօտիկ են, քան երբևիցէ: («Հ. Գ.»)

Կիեվ, 16 սեպտեմբերի

Երեկ գիշերով մի քանի դիմակաւորված զինված մարդիկ, ճանապարհորդների ներկայութեամբ, ներս խուժեցին Լէքգ կայարանի կառավարչի գրասենեակը և յափշտակեցին գանձարկղից 2025 րուբլի: («Հ. Գ.»)

Դէզիօ, 16 սեպտեմբերի

Մայրաքաղաքի և գաւառական մամուլը մատնանշում են Դէզիօյում տեղի ունեցած բարեկամական տեսակցութիւնը, ընդգծելով Իզվօլսկու, Տիտտօնիի և Մուրավիէվի աջող գործունէութիւնը՝ Ռուսաստանի և Իտալիայի միջև աւելի բարեկամական յարաբերութիւններ հաստատելու գործում: («Հ. Գ.»)

Պետերբուրգից սեպտեմբերի 15-ին հեռագրում են «Каспій» լրագրին.

«Эпоха» նոր լրագիրը հաղորդում է, որ կոմս Վորոնցով-Դաշկովի մշակած կովկասեան բարենորոգումների ծրագիրը, որ մտադրութիւն կար ներկայացնել Պետական Դումային, հազիւ թէ շուտով ընթացք ստանայ: Իրանց ընկած հարցապնդումը կովկասի գործերի վերաբերմամբ անյետաձգելի դարձնելու նպատակով, աջակողմեանների բանակը սպառնում է իրանց պահանջը չը յարգվելու դէպքում «սկանդալ սարքել»: Ահա այդ սկանդալից խուսափելու համար, երբ թէ, բիւրօկրատիան ստիպված է յետաձգել Փոխարքայի ծրագրերի իրագործումը օրէնսդրական կարգով մի այլ աւելի նպաստաւոր ժամանակի»:

Կազանի բժշկական ինստիտուտի վերատեսուչ Սալազկինը, ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շվարցի արած երկրորդ պահանջին՝ մինիստրութեանը տեղեկութիւններ հաղորդելու՝ թէ ինստիտուտի պրօֆեսօրներն ինչ քաղաքական կուսակցութիւնների են պատկանում, «Нов. Русь» լրագրի ասելով, պատասխանել է, որ իր գործն է հսկել միայն ինստիտուտի կարգապահութեան վրա, իսկ կուսակցականութեան վրա հսկելու համար կայ ոստիկանութիւն:

Բելգրադ, 16 սեպտեմբերի

«Pr. Bureau»-ն հաղորդում է, որ անկախ արմատականների օրգան «Օդիէկ» այսօրվայ համարում տպել է մի յօդուած «Ռուսաց մամուլը Բօսնիայի հարցի առիթով» վերնագրով:

Այդ յօդուածում ասված է, որ ռուսաց մամուլը, յուզված այն տեղեկութիւններից, որ իբր Աւստրո-Ունգարիան մտադիր է միացնել Բօսնիան, եռանդով բողոքում է ամեն մի փորձի դէմ, որ հակառակ է բեռլինեան դաշնագրութեան, սուլթանի գերիշխան իրաւունքներին, բեռլինեան դաշնագրութիւնը ստորագրող պետութիւնների շահերին, այդ գաւառների սերբ ազգաբնակութեան անժխտելի իրաւունքներին, սերբ ազգի իրաւունքներին, առհասարակ անկախութեան հարցին, որ անջատ չէ բօսնիական հարցի լուծումից:

Երախտագիտութիւն յայտնելով ռուսաց մամուլին այդ հարցի կարևորութիւնը այդօրինակ արդարացի գնահատելու և ջերմ սերբերը տածած համակրանքի համար, «Օդիէկ»-ն ասում է.

«Թէև մենք բարձր թողի չարինք ռուսաց մամուլի յուզող սիմպատիաները, սակայն մենք չենք ցանկանում, լաւ է ասել՝ չենք վստահանում հաւատալ, որ գաղտնի կերպով ներհակ միջազգային պարտականութիւններին և կրկնակի արված յայտարարութեան, պատրաստվում է մի գործողութիւն, որ խստագոյնս աշխեցնէր Սերբիային և սերբերին իրանց աւելի սրբազան շահերի և

յոյսերի նկատմամբ։ Եթէ մենք տեսնէինք, որ մենք չենք կարող այդօրինակ կասկածանքներ և երկիւղներ ունենալ, մենք կը յուսահատվէինք. յետադայ մեր վճիռները դիւրին կերպով կը հանդիսանային այն տրամադրութեան արձագանքը, որի ժամանակ ուշադրութիւն չէ դարձվում վտանգի վրա, չէ կշռվում ռիսկի մեծութիւնը»։

Ուշադրութեան առնելով, որ Նաստիչի գործը, պետական դաւաճանութեան գործը Խորվատիայում, նոյնպէս մեղադրանքներ են, որ բարդում են Սերբիայի վրա Աւստրիայի փաշայի Պլեվլէից հեռանալու առիթով, որ ինքնին կապ ունի Բօսնիայի հարցի հետ, «Օդիէկը» իր պարտքն է համարում վճռականապէս հերքել ամեն մի մեղադրանք՝ իբր Սերբիան օգտվում է անթոյլատրելի այնպիսի միջոցներով, որ ուղղված են խաղաղութեան՝ հարևան միապետի ապահովութեան դէմ, իբր Նրա վարքը այնպիսին չէ, որպիսին կարելի է պահանջել լօյալ հարևանից, որ ամենամանրակրկիտ կերպով կատարում է միջազգային իրաւունքով և պայմաններով նրա վրա դրված պարտականութիւնները։

Լրագիրն ասում է.

«Առանձնապէս Բալկանի այժմեան խառնակ ժամանակ խղճի տարրական պահանջները, էլ չը խօսած ինքնապաշտպանութեան Թշնամական բնազդի մասին, յամառօրէն դրդում են մեզ բացարձակապէս ձեռնպահ մնալ այն ամենից, ինչ որ կարող է անսպասելիութիւնների առիթ տալ միջազգային կարգ ու կանօնը խախտելու կամ միակողմանիութեամբ փոփոխելու մտքով այն գաւառներում, որոնց վիճակի հետ են կապված մեր շահերը և մեր ազգային ապագան»։ («Հ. Գ.»)

—

«Каспій» լրագրին հեռագրում են Պօլսից սեպտեմբերի 15-ին.

«Երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտը բանակցութիւն է սկսել քիւրդերի պարագլուխ Իբրահիմի հետ նրա գերած հազար Թիւրքական զինուորներին ազատելու համար։

«Այսօր ժամանեց այստեղ Պարիզի երիտասարդ Թիւրք կօմիտէտի պարագլուխ Ահմեդ Րիզան։ Նրան հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուին, որի ժամանակ տեղի ունեցան հսկայական մանիֆեստացիաներ։

«Բեդիջանի շրջանում Ֆերիդ Մուհամմեդը կազմակերպել է մի շարժում սահմանադրութեան դէմ։ Նրա կազմակերպած ցոյցը՝ քրիստոնեաներին իրաւահաւասար դարձնելու դէմ՝ զինուորները ցրեցին։ Պահպանողական շարժումը հետզհետէ ուժեղանում է այդ շրջանում»։

—

«Рус. Слово» լրագրի ստացած տեղեկութիւնների համաձայն, Դիարբեքիրում աջողվել է առաջին անգամ կազմակերպել հայերից զինված խմբեր և ուղարկել քրդական շարժման պարագլուխ ապստամբ Իբրահիմի դէմ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

«Каспій» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից.

Լուր տարածվեց շահին սրբազան պատերազմ յայտարարելու մասին։ Այդ առիթով Կ. Պօլսում ապրող պարսիկները միտինգ են կայացրել։ Պարսկական բոլոր կրպակները փակվեցին։

—

«Баку» լրագրին հեռագրում են Թէհրանից.

Շահը հիւանդացաւ։

Ազգաբնակութիւնը ոգևորվում է յեղափոխականների աջող կռիւներով։ Շահի զօրքերի պարտութիւնը Թաւրիզում անկասկած է համարվում։ Շահի հեղինակութիւնը ընկել է։

Նէջէֆի շէյխ-իւլ-իսլամը և Քերբալայի ու Մեշեդի մուշտէիդները յայտնել են, որ շահին չեն ճանաչում, մինչև որ նա չը հրաւիրի մէջլիսը և չարտաքսի բէակցիայի պարագլուխներին։

—

Թաւրիզ, 16 սեպտեմբերի

Քաղաքի երեքօրեայ ապարդիւն ռմբակոծութիւնը ցոյց տուեց, որ բոլորովին թոյլ և անպէտք է այն պատժիչ զօրախումբը, որ կազմված է վայրենի, անկարգապահ ցեղերից։

Կռւող կողմերը վերստին դիմեցին ռուսաց հիւպատոսի միջնորդութեան։

Քաղաքում զգացվում է հացի մեծ պակասութիւն, որովհետև էյն-ուդ-Դօվլէի կարգադրութեամբ շրջակայքից այլ ևս չեն բերում։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

—

Մինիստրութիւնը իր նախագծի մէջ անհրաժեշտութիւն է համարում վերաքննութեան ենթարկել այն օրէնքները, որոնք որոշում են մեզ մօտ հէնց իրան՝ կաթողիկոսի դրութիւնը, նրա իրաւունքները և նրա պարտաւորութիւնները։

Մինիստրութեան առաջին ցանկութիւնն էր, որպէսզի կաթողիկոսը և նրա բոլոր յաջորդները գիտենան պետական լեզուն։ Եւ դրա համար էլ նախամեծար կը լինէր հաստատել այդ աստիճանի մէջ մի անձն ռուսահպատակներից։ Սակայն հազիւ թէ իրապէս հնարաւոր լինի իրագործել այդ վերջին միջոցը, որովհետև ընտրողական ժողովում ռուսահայերն ունեն միայն 27 ձայն, իսկ արտասահմանեան հայերը 98 ձայն։

Ինչ վերաբերում է ռուսաց լեզուի գիտութեան, ահա թէ այդ առիթով մօտաւորապէս ինչ կարծիք յայտնեց Փոխարքան։

Կաթողիկոսական թեկնածուների մէջ քաղաքական տեսակէտից առաւելագոյն յուսալի տարր ներկայացնում են եկեղեցու պատկառելի և լուրջ եպիսկոպոսները, որոնք հեռու են քաղաքական զանազան հոսանքներից։ Սակայն նրանք չը գիտեն ռուս լեզուն, որը լաւ իմանում է հայերի երիտասարդ հոգևորականութիւնը, սակայն որը հեշտութեամբ ենթարկվում է սօցիալ-դեմօկրատիայի ազդեցութեանը։

Արհեստականապէս սահմանափակելով այն անձանց շրջանը, որոնցից կարող էր կաթողիկոս ընտրվել, ոչ միայն պետութեան սահմաններով, որովհետև դժուար է թոյլ տալ, որ արտասահմանեան եպիսկոպոսները գիտենան ռուս լեզուն, բայց մինչև անգամ և աննշան խմբակով, ռուսահայ հոգևորականութիւնից կառավարութիւնը այնպիսի դրութիւն է ստեղծում, որ թէ քաղաքական և թէ պետական կողմից ոչ ցանկալի անձինք կը նստէին կաթողիկոսական գահի վրա։

Բացի դրանից Էջմիածնի պատրիարքի տիեզերական նշանակութիւնն ևս կը նսեմանայ այդպիսի սահմանափակումների պատճառով, որովհետև արտասահմանեան պատուիրակների մասնակցութիւնը ընտրութիւններին միմիայն ձևականութիւն կը լինի…

Մինիստրութեան կարծիքով, պետական շահի տեսակէտից անհրաժեշտ է աւելի ճիշտ որոշել կաթողիկոսի իշխանութեան սահմանները և նրա ստորադասութիւնը կառավարչական բարձր իշխանութեան։

Եւ որովհետև գործող օրէնքների մէջ չը կան որոշումներ, թէ ինչ կարգով պէտք է արձակվի կաթողիկոսը իր պաշտօնից, իրականութեան մէջ կարող է առիթ դառնալ կամ անհիմն ենթադրութեան՝ թէ կաթողիկոսը անփոփոխելի է, կամ գոնէ դժուարութիւններ կը ծագեն՝ եթէ անհրաժեշտութիւն սեպվի լուծել այդ հարցը։

Մինիստրութիւնը առաջարկեց լրացնել այդ պակասը օրէնքների մէջ՝ որոշելով նրա պաշտօնից արձակման կարգը։

Այդ բանին կոմս Վօրոնցով-Դաշկով լուրջ առարկութիւններ բերեց։ Աննպատակայարմար է նախատեսել օրէնքի մէջ կաթողիկոսի պաշտօնից արձակման կարգը, որովհետև նրա քննութիւնը առիթ կը ծառայէ այն վիճելի հարցի ծագման, թէ նա անփոփոխելի է, որպէս ամբողջ եկեղեցու հոգևոր գլուխ։

Ինչ վերաբերում է մինիստրութեան նախագծող օրէնքները կաթողիկոսի իրաւունքների մասին, Փոխարքան գտնում է նրանց ոչինչ չորոշող և ըստ էութեան ոչինչ չը փոփոխող։

Պատրիարք-կաթողիկոսի ստորադրումը, որը առհասարակ, որպէս առանձին եկեղեցու գլուխ, չէ կարող համեմատվել օտար դաւանութիւնների և այլ բարձր հոգևոր անձանց հետ, սենատի և մինիստրութեան՝ միայն մի կատեգօրիայի գործերի վերաբերմամբ, չէ կարող չը մտցնել յայտնի խառնափնթորութիւն հասկացողութեան մէջ նրա իշխանութեան մասին։

Վերջապէս զրկել կաթողիկոսին իրաւունքից քննելու այն գործերը, որոնք քննվում են սինօդում նրա բացակայութեան ժամանակ, ոչինչ գործնական նշանակութիւն չունի, որովհետև այն ժամանակ նա սինօդի անդամներին նախապէս ցուցմունքներ կանէ, բայց նիստերին անուամենայնիւ չի գայ։

Եւ առ հասարակ այդ վերջին առաջարկութիւնը երևան է եկել, ինչպէս երևում է, սինօդի նախկին պրօկուրօրի բացատրութիւններից, բացառապէս այն աննման յարաբերութիւնների պատճառով, որ հաստատվել էին կաթողիկոսի և պրօկուրօրի միջև։ Առաջինը չէր կամենում այցելել սինօդը, իսկ երկրորդը անպատճառ ցանկանում էր տեսնել նրան այնտեղ։ Եւ երբ պրօկուրօր կը նշանակվի մի այնպիսի անձն, որը իր հմտութիւններով կը համապատասխանէր այդ պաշտօնի պահանջներին, պէտք է յուսալ, որ չեն պահանջվի ոչինչ լրացուցիչ օրէնքներ կաթողիկոսի իրաւունքների մասին սինօդի վերաբերմամբ։

Այդ և ուրիշ պատճառաբանութիւնները Փոխարքան շատ մանրամասնօրէն առաջ ևս բացատրում էր ներքին գործերի մինիստրութեանը իր ուղարկած թղթերի մէջ որը գտաւ նրանց ոչ-համոզեցուցիչ։

Փոխարքան հաղորդեց մինիստրութեանը և ընդհանուր քաղաքական խորհրդածութիւնները, որոնց վերաբերմամբ կառավարչապէս չը պէտք էր յարուցանել մի այդքան սուր հարց։

«Ներկայումս հայ ազգաբնակութիւնը, որը յեղափոխականացրած էր այն միջոցներով, որ ձեռք էր առել Կովկասի նախկին կառավարչապետ իշխան Գօլիցին, սկսեց հանգստանալ։ Եւ այդ պատճառով չը պէտք է խախտել այդ հանգիստը՝ ստեղծելով ազգաբնակութեան համար կրօնական և ազգային վիրաւորանքներ։ Երբ կը փոխվի սինօդի պրօկուրօրը, որը իր անտակտութեամբ կաթողիկոսի հետ հաշտ ապրել չը գիտենալու համար գլխաւոր հանգամանքն է հայ եկեղեցու գործերի վարչութեան քաօսական դրութեան, պէտք է յուսալ, որ ոչինչ լրացուցիչ օրէնքներ չեն հարկաւորվի»։

Ուրեմն, ոչ թէ ձախակողմեան լրագիրները, այլ ինքն Կովկասի Փոխարքան խոստովանվեց, որ հայ ազգաբնակութիւնը կամաւոր կերպով չընկաւ յեղափոխութեան մէջ, այլ նրան այդ դրութեան հասցրին իշխան Գօլիցինի բէակցիոն միջոցները։

Եւ այժմ էլ նա հաստատում է, որ եկեղեցու գործերի քաօսական դրութիւնը ոչ թէ հայ հոգևորականութեան յեղափոխական դրութեան հետևանք է, այլ դրա պատճառը սինօդի նախկին պրօկուրօրն է։

Մինիստրների խորհրդի մէջ կոմս Վօրոնցով-Դաշկովը ջերմապէս պաշտպանում էր իր տեսակէտը։ Երկար խորհրդակցութիւնից յետոյ մինիստրների խորհուրդը համաձայնվեց, որ որևէ նոր օրէնքներ մտցնելը վերյիշեալ շրջանում ներկայումս, երբ կաթողիկոս չը կայ, առ հասարակ անյարմար կը լինէր։

Հետևաբար, կաթողիկոսի առաջիկայ ընտրութիւնները կը կատարվեն նախկին պայմաններով և հիմքերով։ Ոչինչ նոր պահանջներ նրանից, այսպէս՝ ռուսաց լեզուի գիտութիւնը և այլն, չեն անվի։

Բայց առ հասարակ վարչութեան կարգի և պատրիարքի իրաւունքների վերաքննութիւնը նրա մասնակցութեամբ տեղի կունենայ։ Որպէս օրէնսդրական հարց՝ նա կը յանձնվի օրէնսդրական երկու ժողովների քննութեանը։ («Зак. Обоз.»)

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՄԻ ՆՈՐ ՄԱՆԵՎՐ

—

«Գործականները» խուզարկուների նոր հնարամտութիւն են ցոյց տալիս։ Այժմ էլ հոտ առնելով, որ իբր թէ ես իմ թեկնածութիւնը կաթողիկոսական պատգամաւորի համար դնում եմ Ղարաբաղի թեմում և կամենալով իբր խանգարել այդ թեկնածութիւնը, նրանք մի նոր քսութիւն և ինսինուացիա են անում։

«Մշակը» և Հ. Առաքելեանը,—ասում են նրանք,—թէև Իգմիրլեանի թեկնածութիւնն են դնում և Օրմանեանի թեկնածութեան հակառակ գրում, բայց գաղտագողի կերպով աշխատում են աջողեցնել Օրմանեանի թեկնածութիւնը և այդ նպատակով համաձայնութիւն և բլոկ են կազմել «հովւականների» հետ։

Եթէ մենք որևէ ժամանակ որոշած լինէինք դնել Օրմանեանի թեկնածութիւնը, մենք բաց ի բաց, յայտնի համարձակ կանէինք այդ, առանց քաշվելու. բայց հայ հասարակութիւնը շատ լաւ գիտէ, որ մենք սկզբից և եթ հանդէս եկանք իբրև պաշտպան Իգմիրլեանի թեկնածութեան՝ որպէս առաջին ընտրելի և Ե. Դուրեանի՝ որպէս երկրորդ ընտրելի։

Բացարձակապէս սուտ է և ընտրողական խարդախ մանեվր «Գործի» և նրա գաղտագողի փաստաբան X-ի կողմից ասել, թէ համաձայնութիւն ենք կայացրել մենք ծածուկ «հովւականների» հետ Օրմանեանի թեկնածութիւնը առաջ քշելու համար։

Մեր ընտրելիներն եղել են և մնում են Իգմիրլեան և Դուրեան։

Բայց մենք մասնակցել ենք զանազան խորհրդակցութիւնների, որ կազմել են պատուիրակները (այդ խորհրդակցութիւններին հրաւիրված չեն եղել միայն դաշնակցական համարվող պատուիրակները), որոշելու համար թէ ինչ կարծիքներ կան երկրորդ ընտրելիի վերաբերմամբ։ Եւ այդ խիստ կարևոր էր, որովհետև վերջերս մենք ստացել էինք մասնաւոր տեղեկութիւններ, որ Թիւրքիայում մի խմբակ (յայտնի է ով) աշխատում է առաջ քշել Սուրէնեանի թեկնածութիւնը։ Նոյնպիսի մի դիտաւորութիւն մենք նկատեցինք և այստեղ «գործականների» կողմից, որոնք, մեր խորին համոզմունքով, Իգմիրլեանի անունը տալիս են միայն ձևի համար, բայց երկրորդ ընտրելիի վերաբերմամբ ոչինչ չը յայտնելով՝ մեծ կասկած են յարուցանում, որ այդ երկրորդ ընտրելին Սուրէնեանն է։ Եւ ահա՝ թէ Սուրէնեանի թեկնածութիւնը խափանելու, թէ երկրորդ ընտրելիի հարցը վերջնականապէս ընդունելի դարձնելու համար, եղան խորհրդակցութիւններ։ Առաջին խորհրդակցութեան, որին մասնակցեց առաջադիմականների հետ միասին նաև պահպանողականների մի մասը, պարզվեց, որ Դուրեանի թեկնածութիւնը ընդունելութիւն չէ գտնում պահպանողականների կողմից, որոնք առաջարկում էին երկրորդ ընտրելին կամ Օրմանեանին և կամ Սուքիասին, որոնց հետ մենք հաշտվել չենք կարող։ Բայց այդտեղ միևնոյն ժամանակ պարզվեց մի կարևոր հանգամանք, այն է՝ որ Սուրէնեանի թեկնածութիւնը ոչ մի կողմից ընդունելի չէ, հետևաբար, այդտեղ պարզվեց և այն, որ պատգամաւոր չէ կարող ընտրվել մի անձն, որ կողմնակից է Սուրէնեանի թեկնածութեան և կամ հանդէս է գալիս երկրորդ ընտրելիի վերաբերմամբ անորոշ կամ խորհրդաւոր լռութեամբ։ Մինչդեռ մենք պարզ կերպով դրած լինելով մեր թեկնածուներին՝ Իգմիրլեան և Դուրեան, բնականաբար, ոչ մի համաձայնութիւն կամ բլոկ կազմելու պէտք չէ եղել։

Եւ դրա մի ուրիշ ապացոյցն ևս այն է, որ առաջադիմականները դրանից յետոյ առանձին խորհրդակցութեան մէջ որոշել են պատգամաւորի պաշտօնի համար առաջ մղել Ալ. Քալանթարի թեկնածութիւնը։

Փոխանակ այդպիսի ստոր մանեվրների դիմելու, «գործականները» և նրանց գաղտագողի փաստաբան X-ը աւելի լաւ կանէին յայտնել՝ թէ ում են կամենում երկրորդ ընտրելի, Դուրեանին թէ՞ Սուրէնեանին։

Իսկ կընտրվեմ ես Ղարաբաղի թեմի պատգամաւոր՝ թէ ոչ, կամ կը դնեմ ես իմ թեկնածութիւնը՝ թէ ոչ—ամենից շատ հետաքրքրողը ձեզ այդ է—այդ թողէք իմանալ Ղարաբաղի թեմի պատուիրակներին և ինձ։

Հ. Ա.

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—

Շաբաթ, սեպտ. 13-ին տեղի ունեցաւ Թիւրքական-Հայաստանի հայ տառապեալների Հանգանակիչ Մասնաժողովի նիստը, նախագահութեամբ պ. Ալ. Մելիք-Ազարեանի և մասնակցութեամբ անդամների— պ. պ. Կ. Ստեփանեան, Ս. Ցարութիւնեան, Հ. Առաքելեան, Աւ. Արասխանեան և Գ. Կաֆեան։

Հ. Առաքելեան զեկուցեց ամբողջ պատմութիւնը Թիւրքահայ գաղթականների վերադարձի համար ընտրված մասնաժողովի։ Լսելով և իմանալով հէնց իրա մասնաժողովի անդամներից, որ նա դեռ չէ հաստատվում և որ յամենայն դէպս հանգանակութեան թոյլտուութիւն դժուարութեամբ ձեռք պէտք է բերվի, միւս կողմից գաղթականներին պէտք է անմիջապէս, առանց յապաղման օգնութիւն հասցնել հայրենիք վերադառնալու համար, նա առաջարկում է որ այդ գործը յանձն առնէ Հանգանակիչ Մասնաժողովը, որ արդէն ունի հանգանակութեան թոյլտուութիւն. միայն պէտք է միջնորդել Փոխարքայի առաջ, որ թոյլ տայ հանգանակված դրամները ուղարկել ոչ թէ Հայաստան, այլ գործադրել այստեղ Թիւրքահայ գաղթականներին օգնելու՝ վերադառնալ հայրենիք։

Գ. Կաֆեան զեկուցեց, որ օգոստոսի 1-ին ընտրված մասնաժողովը թէև դեռ չէ հաստատված, բայց հաւանական է, որ շուտով հաստատվի, ուստի անյարմար է՝ որ ուրիշ մասնաժողով դիմումն անէ նոյն նպատակով։

Երկար վիճաբանութիւններից յետոյ, Հանգանակիչ Մասնաժողովը եկաւ այն եզրակացութեան, որ 1) հարկաւոր է Մասնաժողովին միջնորդութիւն յարուցանել, որ թոյլատրվի նրան այստեղ օգնել Թիւրքահայ գաղթականներին, 2) այժմ, քանի որ օգնութիւնը անյետաձգելի է, ամենից յարմար է խնդրել Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան, որ սա, քանի որ իրաւունք ունի Կովկասի սահմաններում օգնել հայերին, իր ձեռօք առնէ Թիւրքահայ գաղթականներին օգնելու գործը, մինչև որ կառավարութեան կողմից կամ կը հաստատվի օգոստոսի 1-ին ընտրված մասնաժողովը, կամ Հանգանակիչ Մասնաժողովը կը ստանայ թոյլտուութիւն՝ գործադրելու իր գումարները այստեղ, փոխանակ Հայաստան ուղարկելու։

Ինչպէս կը տեսնեն ընթերցողները «Մշակի» երէկվայ համարի մէջ տպված յայտարարութիւնից, Բարեգործական ընկերութեան Խորհուրդը արդէն սկսել է գաղթականներին օգնելու գործի կազմակերպութիւնը։ Մնում է, որ հայ հասարակութիւնը չը զլանայ իր նուէրներով օգնել այդ ընկերութեան այդպիսի մի անյետաձգելի պահանջ իրագործելու համար։

«Մշակի» խմբագրութիւնը պատրաստ է ընդունել նուէրներ այդ նպատակով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

—

Գորիս, 5 սեպտեմբերի

Զանգեզուրի կենտրօն Գորիսը, որ մի քանի տարի առաջ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի խուլ յետամնաց գիւղ, վերջերս բաւական արագօրէն մեծացաւ ու փոխվեց մի կանօնաւոր քաղաքի։ Այստեղ տարիներից ի վեր գոյութիւն ունի մինիստրական երկդասեան ուսումնարան, ուր սովորում են ութսունից ոչ աւել սաներ։ Ակնյայտ է այդ ուսումնարանի տուած արդիւնքը 300 տուն բնակչութիւն ունեցող գիւղի համար։

Մեծ պահանջ կար այսպիսի մի կենտրօնավայրում ունենալ մի միջնակարգ դպրոցական հաստատութիւն։ Վաղուց ի վեր մտադրութիւն կար հիմնել այդ ցանկալի հաստատութիւնը, բայց որ գլխաւորն է՝ միջոցները պակասում էին։

Քաղաքի ունևոր դասակարգի համար էլ ինչ հոգս այդպիսի մի հիմնարկութեան գոյութիւնը։ Նրանք ամենայն դիւրութեամբ իրանց զաւակներին ուղարկում են Շուշի քաղաքի բէալական դպրոցը ու տալիս բարձր կրթութիւն բայց չունեւորը… Ինչպէս ամենուրեք, այնպէս էլ այս մոռացված վայրում մնում է ծարաւի կրթութեան։ Նա ամենայն ուրախութեամբ ուղարկում է իր որդուն յիշեալ երկդասեան ուսումնարանը, հազար ու մի դժուարութիւններով մտցնում, ուր գրել կարդալ սովորելուց այն կողմը չի անցնում, այն էլ Աստուած գրել կարդալ համարի։ Տողերիս գրողը մի տարի վարում էր այդ ուսումնարանում ուսուցչի պաշտօն։ Սեպտեմբեր ամսին ընդունելութեան օրը բակում ասեղ գցելու տեղ չէ լինում։ Գալիս են երկհարիւրաչափ ուսումնատենչ մանուկներ, որոնցից շատ քչերն են ընդունվում, իսկ մնացածները գլխիկոր, արտասուքները աչքներին վանում են տուն։ Այս ողբալի երևոյթը շարունակվել է տարիների ընթացքում և գուցէ կը շարունակվէր, եթէ չը լինէին մի քանի ձեռնարկող մարդիկ, ինչպէս Ց. Միքայէլեան, Հ. Մելիք-Օհանեան, Խ. Մելիք-Օհանեան և նոր գաւառապետ Գ. Պֆէլէր։

Զանգեզուրի տառապող ժողովուրդը այսօր կրկին բաղդ ունեցաւ տեսնել իր մէջ կառավարչական այդ անձնուէր պաշտօնեային՝ գաւառապետ Պֆէլէրին, որը սրանից առաջ եօթը տարի նոյն պաշտօնով անկեղծ ծառայել է Զանգեզուրում։ Նա կատարել է բաւական աչքի ընկնող մեծ հասարակական գործեր՝ որպէս են Գօրիսից Ղաթարի պղնձահանքերն ու Նախիջևանի գաւառասահմանը խճուղի անցկացնելը, քաղաքը գեղեցկացնելը ու այլ բարելաւումներ գաւառում մտցնելը։

Նորերս նա գումարեց մի բազմամարդ ժողով, ուր առաջարկեց ամեն կերպ աշխատել հիմնել քաղաքում պրօգիմնազիա։ Նշանակեց գաւառական իւրաքանչիւր ծխին (20 հազար ծուխ) տուրք տարեկան յիսունական կօպէկ, ուղարկեց զանազան քաղաքներում ապրող ունևոր մարդկանց նուիրատուներ։

Գ. Գ. Տէր-Մարգարեանց, որ մեծ բարեգործութիւններ է արել, այս դէպքում էլ սրտանց ձեռք մեկնեց այս մեծ գործին։ Ուղարկել է միանուագ 1000 ռուբ. և խոստացել է տալ տարեկան 500 րուբլի։ Խոստացել են տալ միանուագ նաև պ. պ. Կունդուրով (յոյն հանքատէր) 1000 ր., Ս. Մելիք-Փարսադանեանց 500 ր.։ Խոստացել են օգնել նոյնպէս մի քանի Թուրք անուանի բէգեր։

Զենք կարող այստեղ լռութեամբ անցկացնել յայտնի հարուստ այրի տ. Թ. Ղալամեանցի քար անտարբերութիւնը այս բարի գործի նկատմամբ։ Թախանձագին խնդիրքին նա պատասխանել է բացարձակ մերժումով։

Սիւնեցի Լևոն

—

Անգեղակոթ (Զանգ. գ.), 13 սեպտ.

Ինչպէս Սիսիանի մի քանի գիւղերում—Ուզ, Մազրա և այլն—նոյնպէս մեր մոռացված Անգեղակոթ գիւղը մի տեսակ հիւանդութիւն է մտել, որին խեղճ ժողովուրդը չէ կարողանում ոչ մի անուն տալ։ Դեռ մի ամիս չը կայ՝ բազմաթիւ զոհեր է տարել, չը զանազանելով ոչ սեռ, ոչ հասակ։ Հիւանդացողը 3—4 օրից աւել չէ ապրում. պատահել է, որ բոլորովին առողջ մի կին դաշտային աշխատանքի ժամանակ մանգաղը ձեռին է մահացել։ Հազիւ է պատահում, որ հիւանդացողները կրկին առողջանան. ցաւը սկսում է կոկորդից, որտեղը մեռնելուց յետոյ, ուռչում է. միևնոյն ժամանակ դէմքը և մարմնի զանազան տեղերը ծածկվում են կարմիր բծերով։

Սիսիանի պէս մի մեծ շրջանում չը կայ մի հատ բժիշկ, որ մաքառէ այդ սարսափի առաջն առնելու։ Այսպէս՝ խեղճ ժողովուրդը մատնված է բաղդի կամքին. բժիշկ գտնել կարելի է Գորիսում, իսկ եթէ գիւղացին յանդգնի դիմել այնտեղ, իր համար շատ թանգ կը նստի, կամ մի գուցէ նրա այդ խնդրին ուշադրութիւն դարձնող էլ չը լինի։ Անկարող գիւղացիք նախապէս այդ զգալով մունջ սպասում են այդ սարսափելի չարիքի ինքնակամ հեռանալուն, որը քանի գնում լայն ծաւալ է ստանում՝ դառնալով ամենազգալի Թշուառութիւնների պատճառ….

Մի քանի հասարակութիւն արդէն կանգնած են կորստեան ճանապարհին….։

Մ. Մկրտումեանց

—

Բաթում, 15 սեպտեմբերի

Ամսիս 12-ի գիշերը, ժամը 12-ին, շանտաժիստները, ձևացնելով իրանց որպէս հիւանդի տէրեր, մտնում են բժ. Տրեանդաֆիլլիդիսի մօտ և խնդրում գնալ իրանց հետ, որպէս թէ տանը եղող ծանր հիւանդին տեսնելու։ Բժիշկը, համաձայնվելով, նստում է դրսում սպասող կառքը։ Ուր տանելը առայժմ յայտնի չէ։ Միայն մօտ 2 ժամից յետոյ բժշկի կինը ստանում է իր ամուսնուց մի գրութիւն, որով յայտնվում է, որ շանտաժիստները պահանջում են նրանից որպէս փրկանք 30,000 ր., հակառակ դէպքում սպառնում են սպանել բժշկին։ Ոստիկանութիւնն իր ամբողջ կազմով ոտի է կանգնած։

Շ. Շ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Թիֆլիսի նահանգական դատարանի երկրորդ քրէական բաժնում քննվեց սեպտեմբերի 12-ին Թիֆլիսեցի Գէորգ Տէր-Զհանեանի գործը։

Ինչպէս յայտնի է, Տէր-Զհանեանը սկզբներում ընտրված էր Ս. Նշան եկեղեցու երէցփոխ և վարում էր Մար. Ցովնանեան օրիորդաց դպրոցի տնտեսական մասը։

Մեղադրական ակտում յիշված էր, որ Տէր-Զհանեանը յիշեալ պաշտօնները կատարելու ժամանակ իւրացրել է 2000 րուբլի եկեղեցական գումարներից և 3000 րուբլուց էլ աւելի դպրոցին պատկանելիք գումարներից։

Երկու գործերի վերաբերմամբ փաստաբանը Տէր-Զհանեանին մեղաւոր ճանաչեց և դատապարտեց մի-մի տարվայ բանտար-

կուԹեան իւրաքանչիւր գործի համար, զրկելով նրան բոլոր անձնական և ստացուածքային իրաւունքներից։

Նաև դատարանը որոշեց Տէր-Ջհանեանից պահանջել 2000 րուբլի յօգուտ Ս. Նշան եկեղեցու և 3023 ր. 84 կոպէկ էլ յօգուտ Ցոլիանեան դպրոցի։

—

Հոկտեմբերի 6-ին Օդեսայի դատաստանական պալատը քննելու է «Թուրքայի հանրապետութեան» մեծադղորդ գործը։

Պաշտպանելու են երդուեալ հաւատարմատարներ՝ Ն. Մուրավիեվը և Շապիրօ։ Թիֆլիսից գնալու են նաև երկու փաստաբաններ։

—

Սեպտեմբերի 15 ին Թիֆլիսի դատաստանական պալատի յատուկ ատեանում, դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ, դռնփակ քննվեց Պետական Դումայի նախկին անդամ (Երևանի նահանգի կողմից) Միրական Տիգրանեանի գործը, որ մեղադրվում է հայկական «Դաշնակցութիւն» յեղափոխական կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայի գործունէութեան հաշիւը, ինչպէս նաև ուրիշ յանցաւոր բրօշիւրներ տպագրելու և տարածելու մէջ։

Մեղադրեալին պաշտպանում էր երդուեալ հաւ. Մ. Գրուզէնբերգ։

Երկար խորհրդակցութիւնից յետոյ ատեանը Տիգրանեանին մեղաւոր ճանաչեց և դատապարտեց նրան երեք ամսով բանտարկութեան։

—

Սեպտեմբերի 15-ին կովկասեան զինւորական նահանգական դատարանը քննեց Ծարնար Տօպուրիայի գործը, որ մեղադրըւում էր «Թիֆլիսի նոր տերրորիստների խմբակ» յանցաւոր կազմակերպութեան պատկանելու, պայթուցիկ նիւթեր պահելու, 1907 թ. դեկտեմբերի 21-ին Բէօյուկ-Քեասիկ կայարանում պօստային գնացքը խորտակելու նպատակով երկաթուղային գծերը քանդելու մէջ։

Զինւորա-նահանգական դատարանը մեղաւոր ճանաչեց Տօպուրիային և դատապարտեց մահվան պատժի կախաղանի միջոցով։

Պաշտպան Ջափարիձէն զինւորական գլխաւոր դատարանի անունով ներկայացրել է վճռաբեկ բողոքագիր։

—

Սեպտեմբերի 15 ից Թիֆլիսի դատաստանական պալատի յատուկ ատեանում սկսվեց «Միխայլովոյի երկաթուղային գործադուլի» մեծադղորդ գործի քննութիւնը։

Այս գործի համար կանչված են 25 վկաներ։

Մեղադրեալների աթոռներում նստած են 3 հոգի՝ Խէչինով Իօսիֆ, Ռատիա Եփստափեյ և Կվալիձէ Եակով։

Մեղադրական ակտը կազմված է քր. պատժ. 102-րդ յօդուածով։

Մեղադրեալներին պաշտպանում են երդ. հաւատարմատարներ Ջաքաղարի և Մ. Գրուզենբերգ։

Գործը կը տևէ հաւանօրէն մի շաբաթ։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

—

Սեպտեմբերի 13-ից Թիֆլիսի հասարակական կլուբը վերսկսեց իր շաբաթական երեկոյթները նոր շէնութեան մէջ—Բօրսայի դահլիճում (Երևանեան հրապարակին մօտիկ)։

Առաջին երեկոյթը, որ տեղի ունեցաւ նոյն օրը, այսինքն սեպտեմբերի 13-ին, ամբողջովին նուիրված էր Լ. Ն. Տօլստոյին։

Բօրսայի ընդարձակ դահլիճում սեղանի վրա դրված էր ռուս մեծ գրողի անդրին, որին՝ յատակի վրա շարված ծաղկամաններից վեր ուղղված ծաղկեթփերը փարել, պճնազարդել էին իրանց գոյնզգոյն և անուշաբոյր ծաղիկների և դալար տերևների մէջ, արժանեօրէն ռուսերը հովանաւորում էին նրա ալեոր գլուխը, որ պսակված էր արդէն դափնեայ պսակով։

Տեսարանը բաւականին տպաւորիչ էր։ Երևում էր, որ կլուբի ղեկավարները ջանք չէին խնայել երեկոյթը շքեղ ու հետաքրքրական դարձնելու։

Ժամը $8^1/_2$-ին սկսեց երեկոյթը բազմաթիւ երկսեռ ինտելիգենտ հանդիսականների մասնակցութեամբ։ Առաջինը կարդաց տ. Մ. Մ. Տրօպ—«Յարութիւն» վէպից մի կտոր, Նեխլիւդովի և Կատիւշայի առաջին տեսակցութիւնը գիշեր ժամանակ։

Իւ. Դ. Կօբեակօվը կարդաց մեծ յօբելեարի «Պատերազմ և խաղաղութիւն» վէպից մի էջ. Մոսկվայի հրդեհի պատկերներից—Պիէրը գնդակահարութեան պատժի առաջ։

Ապա Կ. Վ. Սիվկօվը կարդաց մի հետաքրքրական ռեֆերատ «Տօլստոյի պատմական աշխարհահայեացքները» վերնագրով։

Երեկոյթը վերջացաւ ժամը 11-ին, երդուեալ-հաւատարմատար Բուկշտէյնի ռեֆերատով մահվան պատժի մասին։

Երեկոյթը ընդհանրապէս հետաքրքրական էր և հանդիսականները լաւ տպաւորութեան տակ ցրվեցին իրանց տները։

Առաջիկայ շաբաթ, սեպտեմբերի 20-ին, երեկոյթը խոստանում է լինել աւելի հետաքրքրաշարժ, որովհետև առաջին երեկոյթում կարդացված ռեֆերատների մասին տեղի են ունենալու վիճաբանութիւններ։ Այդ երեկոյթը ևս նուիրված կը լինի Լ. Ն. Տօլստոյին։

ԽՈԼԵՐԱ

—

◆ Խօլերայի դէպք է եղել Փօթի քաղաքում. հիւանդացել է Ելենա Միչինովան։

◆ Գանձակում քաղաքային դուման 10,000 րուբլի է յատկացրել խօլերայի դէմ մաքառելու համար։

◆ Սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում խօլերայով հիւանդացան չորս հոգի 4 դ և 10-դ քաղաքամասերում։

◆ Շաբաթ, սեպտ. 13-ին, յատուկ մի մասնաժողով, բաղկացած քաղ. վարչութեան անդամ Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկից, բժ. Ստեփանեանից, Իսամանով, Խարազով, Մուխարինսկի, Իգիթեան բըժիշկներից և բարաքային հիւանդանոցի բոլոր բժիշկներից, դիտեց խօլերային բարաքները։ Այդ օրը բարաքներում գտնվում էին խօլերայով հիւանդ հինգ տղամարդ և վեց կին։ Մասնաժողովը խօլերային հիւանդանոցի շինութիւնը բաւարար գտաւ։ Հսկողութիւնը և հիւանդներին խնամելը աւելի ընդարձակելու համար մասնաժողովը անհրաժեշտ գտաւ երկու ֆէլշէր ևս աւելացնել։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը դիմել է քաղաքային սանիտարական - բժշկական տեսչին, խնդրելով մի սանիտարական բըժիշկ նշանակել Մաղաթեան կղզին քննող մասնաժողովի մէջ, ուր արդէն տեղի են ունեցել խօլերայի մի քանի դէպքեր։

◆ Սեպտ. 13 և 14-ին Թիֆլիսում խօլերային նշաններով հիւանդացած Անդրէյ Իվանովի, Բալիդ Եալիչեվի և Նիկօլայ Զիաբէրաշվիլու արտաթորութիւնները բակտերիօլօգիական հետազօտութեան ենթարկելուց յետոյ, երևացել է որ նրանց հիւանդութիւնը խօլերա չէ։

◆ Պետերբուրգում սեպտ. 15—16 ը խօլերայով հիւանդացան 222, մեռան 98 հոգի։ Նահանգում այդ օրը հիւանդացել են 10, մեռել են 3 հոգի։

◆ Գանձակում, սեպտ. 15 ին հիւանդացան 5, մեռան առաջուց հիւանդացածների հետ 6։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մեզ հաղորդում են, որ ամսիս 16 ին կայացել է Թիֆլիս քաղաքի առաջադիմական բանակին պատկանող կաթողիկոսական պատուիրակների մասնաւոր խորհրդակցութիւն՝ որոշելու համար հաւանական թեկնածուն Թիֆլիսի թեմի պատգամաւորի պաշտօնի համար։ Խորհրդակցութիւնը գաղտնի քուէարկութեամբ և ձայների բացարձակ առաւելութեամբ կանգ է առել «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարի վրա, իսկ իբրև անձնափոխանորդ նշանակվել են պ. պ. բժ. Կ. Ստեփանեան և երդ. հաւատարմատար Յ. Սպէնդիարեան։ Ընդհանուր ժողովի նախագահութեան կամ ատենապետութեան պաշտօնի համար որոշված է առաջարկել բժ. Կ. Ստեփանեանին կամ Յ. Սպէնդիարեանին։ Միաժամանակ մեզ հաղորդում են, որ պահպանողական պատուիրակները մտադիր են դնել պ. պ. Ս. Ջերբեզեանի և բժ. Ա. Ղազազեանի թեկնածութիւնը։ Մի այլ խմբակ մտադիր է առաջարկել պ. պ. Աւ. Ահարոնեանի և Ս. Յարութիւնեանի թեկնածութիւնը։ Ըստ մշակական կամ առաջադիմական պատուիրակների մասը, որ ենթադրվում է բաղկացած լինել մօտ 60 պատուիրակներից, գնում է Ալ. Քալանթարի թեկնածութիւնը, որ թէև բացակայ է քաղաքից, բայց իր ձայնը, իբրև պատուիրակի, տուել է բժ. Կ. Ստեփանեանցին։

◆ Վաղը, ուրբաթ, Թիֆլիսի բօրսայի շինութեան մէջ, երեկոյեան ժամը 7-ին, նշանակված է կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը։

◆ Սեպտեմբերի 14-ին, ցերեկով, Թելաւից 9 վերստ հեռաւորութեան վրա, մի աւազակախումբ կողոպտել է Թիֆլիս եկող հանրակառքը։ Զինված աւազակները կանգնեցրել են հանրակառքը և կողոպտել են ճանապարհորդների փողերը և արժէքաւոր իրերը։ Ապա, բռնելով ճանապարհորդներից մէկին՝ Թելաւեցի Միքայէլ Միսօեվին, նրանք անյայտացել են։

◆ Ներսիսեան դպրանոցի ուսուցիչներից մէկն՝ պ. Պօղոս Հովսէփեանը խնդրում է մեզ յայտնել, որ իր՝ Մուրացանի Թաղմանը ներկայ չը լինելու պատճառն այն է, որ ինքը քաղաքից բացակայ է եղել և շատ ուշ է իրան իմաց տրվել, թէ ինքն ընտրըված է իբրև ներկայացուցիչ Էջմիածնի Գէորգեան ճեմարանի՝ Մուրացանի Թաղմանը ներկայ գտնվելու։

◆ Վ. Թամամշեանը, ինչպէս յայտնի է, դիմեց դպրոցական մասնաժողովին, խնդրելով նրա հաստատած Թոշակը տալ Պետերբուրգի իրաւաբանական ֆակուլտէտի ուսանող Բագրատունուն։ Դպրոցական մասնաժողովը, այլևս չը մտնելով այդ Թոշակը ստանալու համար ներկայացված 20-ից աւելի խնդրագրերի քննութեան մէջ, յարգեց Վ. Թամամշեանի միջնորդութիւնը։ Սակայն քաղաքային վարչութիւնը չը հաստատեց այդ որոշումը, առաջարկելով մասնաժողովին քննել ըստ էութեան բոլոր խնդրագրերը և այդ Թոշակը յատկացնել ամենակարիքաւոր խնդրատուին։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Բ. Սավիցկին հրաժարվել է ձայնաւորութեան կոչումից։ Նրա տեղ վարչութիւնը հրաւիրել է հերթական կանդիդատ Մարկօզօվին։

◆ Թիֆլիսի փողոցներից մէկում, սեպտեմբերի 15-ին, ոստիկանութիւնը ձերբակալել է 1-ին Պետ. Դումայի անդամ Նօյ Ժօրդանիային, որ մեղադրվում է ի թիւս միւսների վրբօրգեան կոչը ստորագրելու մէջ, սակայն մինչև օրս Թագնվում էր։ («К.»)

◆ Թիֆլիսի քաղաքային եկամուտները այս տարի ստացված են սովորական տարիներից աւելի լաւ։ Այսպէս, տարվայ սկզբից մինչև սեպտեմբերի 13 ը քաղաքային Ջրանցքից ստացվել է 165,290 ր., գնահատման տուրքից՝ 430,234 ր., տրակտիրային տուրքից՝ 64,348 ր., քաղաքային հողերի կապալներից՝ 41,326 ր. և այլն։

◆ Նահանգական վարչութիւնը յատուկ պաշտօնեայ է ուղարկել քաղաքային վարչութեանը էլեքտրաքարշի կանօնաւոր երթևեկութեան վրա հսկելու համար։

◆ Գալիք 1909 թ. փետրվարի վերջերից կամ մարտի սկիզբներից Թիֆլիսի ու Վլադիկավկազի և Թիֆլիսի ու Սղնախ-Թելաւի միջև, կովկասեան գլխաւոր իշխանութեան թոյլտւութեամբ, հաստատվում է աւտոմօբիլների հաղորդակցութիւն։ Դրա նախաձեռնող Ս. Եղիգարեանը Շվէյցարիայի Զաուրէր ֆիրմային արդէն պատուիրել է 42 աւտոմօբիլ, որոնցից 20-ը յատկացվելու է ճանապարհորդների հերթական երթևեկութեան համար, իսկ մնացած 4 և 6 տեղանոց աւտոմօբիլները բաց կը թողնվեն ցանկացողների համար։ Թիֆլիսից մինչև Վլադիկավկազ, կայարաններում կանգ առնելով, այդ աւտոմօբիլներով կարելի է գնալ 13 ժամում, մինչև Թելաւ—6 ժամում, իսկ մինչև Սղնախ—5 ժամում։ Այդ աւտոմօբիլ հանրակառքերը ձմեռը տաքացվում են, իսկ անիւները այնպէս են յարմարեցված, որ կարող են երթևեկել սառոյցի և ձիւնի վրա։

◆ Թոյլատրված է Թիֆլիսում հրատարակել և մօտ օրերս լոյս կը տեսնի վրացերէն լեզուով նոր շաբաթաթերթ «Մզէ» (Արև) անունով։

◆ Ի կատարումն Պետական Դումայի որոշման, ներկայումս Կովկասի Փոխարքայի դիւանատունը զբաղված է 1909—1911 թ.թ. Կովկասի զէմստվային ծախքերի նախահաշիւը տպագրելով հին ձևով։

◆ Թիֆլիսի ժամ. գեներ.-նահանգապետի սեպտ. 13 ի կարգադրութեամբ զինւորական դրութեան ամբողջ ժամանակամիջոցում փակվում է Թիֆլիս քաղաքում հրատարակվող «Голосъ Кавказа» օրաթերթը ֆինանսական ուղղութեան համար, որ առանձնապէս արտայայտվեց այս տարվայ № 679 ում։ Նոյն Թիւ որոշմամբ նոյն ժամանակով դադարեցվում է «Торговая Газета» շաբաթաթերթը։

◆ Մի Թիւրքահայ, Աբրահամ Խաչատրեան, խնդրում է այն մարդկանց, որոնք որևէ տեղեկութիւն ունենն բնիկ Կ. Պօլսի Ենի-Կափու Թաղեցի Լևոն Խաչատրեանի մասին, բարի լինեն հաղորդել իրան այդ տեղեկութիւնները։ Լևոն Խաչատրեանը, որ որանից 5 տարի առաջ Բագւում էր բնակվում, 35 տարեկան է, կոչվում է նոյնպէս և Ֆէնէրջեան։ Ցիշեալ անձի մասին որևէ բան գիտցողները կարող են իրանց տեղեկութիւնները հաղորդել հետևեալ հասցէով՝ Constantinople, Yéni-Kapou, Sandik Bournou, Mr. Apraham Khatchadourian.

◆ Ստացանք հետևեալ նոր գրքերը. 1) պրոֆ. Ալֆրեդ Ֆուռնիէի «Բժշկվում է արդեօք սիֆիլիսը», Թարգմ. Ար. Մխիթարեանի, հրատ. Թիֆլիսի քաղ. Ալէքսանդրեան հիւանդանոցի բժիշկների. գինն է 35 կ., 2) «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, հայկական և ասորական աղբիւրների համաձայն», ուսումնասիրեց Երուանդ վարդ. Տէր-Մինասեան, հրատ. Սուքիաս արքեպիսկոպոսի ծախսով, գինը 1 ր. 50 կ.։

◆ ՔԻՇԻՆԵՎԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 7-ին տեղիս եկեղեցում նշանակված էր Բեսարաբիայի և Խերսոնի նահանգների 7 համայնքների կողմից ուղարկված երեսփոխանների ժողովը, որ պիտի ընտրէր երկու պատուիրակ մասնակցելու Ն-Նախիջևանում թեմական պատգամաւորի ընտրութեանը։ Ներկայ էին բոլոր 9 երեսփոխանները և կամ նրանց թեկնածուները։ Ժողովի նախագահ ընտրվեց Օդեսայի երեսփոխան Մարգարեանցը, որը առաջարկեց ներկայ ժողովը անկանօն համարել այն հիման վրա, որ ըստ կանօնադրութեան իւրաքանչիւր եկեղեցի տալու է երկու երկու պատուիրակ, մինչ այս շրջանում, թեմ. իշխանութեան կարգադրութեամբ, Քիշինեվը տուել է 3 երեսփոխան, իսկ միւս քաղաքները մի-մի. այլ և՝ ժողովը անմարդար համարեց եպիսկոպոսի ընտրութիւնը և որոշեց, որ իւրաքանչիւր եկեղեցու պատուիրակ (արդէն ոչ երեսփոխան) ուղղակի գնալու է Նոր-Նախիջևան և մասնակցելու թեմական պատգամաւորի ընտրութեանը։ Այս երկու անկանօնութիւնը պարզելու դիտաւորութեամբ ժողովը ամբողջ կազմով նախ դիմեց առաջնորդի մօտ բացատրվելու և յետոյ գրաւոր բողոք կազմեց առաջնորդին ուղղած, որի մէջ խնդրում է նոր՝ արդարացի ընտրութիւններ նշանակել շուտափոյթ։ Սեպտեմբերի 7-ին թեմակալ առաջնորդի նախաձեռնութեամբ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց եկեղեցում նորոգ հանգուցեալ գրող Մուրացանի համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Սեպտ. 1 ին ձերբակալվել է գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ աքսորված Իվան Զուրաբովը։

◆ Սեպտ. 15 ին տպարանատէր Մովսէս Վարդանեանը յայտնել է ոստիկանութեան, որ երբ նա Երևանեան հրապարակից էլեքտրաքարշով Սամաննայա հրապարակն է գնալիս եղել, ինչ-որ անյայտ գըրպանահատ հանել է նրա քսակը, որի մէջ կար 270 րուբլի։ Վարդանեանը գողութիւնը նկատել է միայն Սամաննայա հրապարակում։ Միջոցներ են ձեռք առնված գրպանահատին բռնելու։

◆ Սեպտ. 1?-ին Թիֆլիսեցի Միխայիլ Ագգզօմէլաշվիլին յայտնել է ոստիկանութեան, որ սեպտ. 14 ին երկաթուղու գծի միւս կողմը, երեկ. ժամը 5-ին, նրա վրա յարձակվեցին 4 զինված կողոպտիչներ և մահվան սպառնալիքով խլեցին նրանից արծաթեայ ժամացոյցը, որից յետոյ անյայտացան։ Ձեռք առնված միջոցների շնորհիւ, Սուրբ-Կարապետի ձոր կոչված տեղում ձերբակալվեցին երկու կասկածելի անձեր, որոնց մօտ գտնվեցին 2 դաշոյն։ Ձերբակալվածների ազգանունները էին Խաչատուր Պետրոսեան և Ալէքսանդր Բաղդասարեան։ Պետրոսեանի մօտ խուզարկելու ժամանակ գտնվեց 80 րուբլի։ Ցանձին այդ նոյն անձանց Ագզգօմէլաշվիլին ճանաչել է իբր կողոպտիչներին։

◆ Սեպտ. 16 ին ոստիկանները ձերբակալել են Աւետիք Յարութիւնեանի սպանութեան մէջ մասնակցած Արշակ Ճարտարեանին, որ յանձնված է այժմ դատարանի ձեռքը։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Սեպտեմբերի 12-ին, ցերեկվայ ժամը 12-ին, «Միլով և Թայիրով» ընկերութեան Բիբի-Էյբաթի նաւթահանքի կառավարիչ Գ. Ա. Նազարեանը երբ բացատրվում էր պաշտօնից արձակված մի բանւորի հետ, վերջինս յանկարծ դուրս է հանում ատրճանակը, բայց չէ կարողանում կրակել, որովհետև Նազարեանը, առանց շփոթվելու, խլում է նրա ձեռքից ատրճանակը և այդպիսով ազատվում է մահափորձից։

◆ Սեպտեմբերի 11 ին Բալախանիում, եղբ. Միրզոյեանների նաւթահանքում բըսպանվել է կառավարչի օգնական Ն. Ի. Ներսիսեանը։ Մարդասպան Մ. Շահնազարեանը առաջ ծառայելիս է եղել նոյն ֆիրմայում. հրաժարվելով ծառայութիւնից՝ նա հեռացել է Բալախանիից։ Մօտ ժամանակներս վերադառնալով Բագու՝ նա քանիցս դիմել է Ներսիսեանին խնդրելով կրկին ծառայութեան ընդունել, բայց ազատ տեղ չը լինելու պատճառով մերժում էր ստանում։ Սեպտեմբերի 11-ին, ցերեկվայ ժամը 3-ին նա նորից ներկայանում է Ներսիսեանին և խնդրում, բայց միևնոյն պատասխանը ստանալով՝ ուղղակի գնում է փորվող բուրօվօյը և յայտնում, որ ընդունված է ծառայութեան։ Կէս ժամից յետոյ Ներսիսեանը գնում է բուրօվօյ։ Շահնազարեանը նրան տեսնելուն պէս հանում է «մաուզերը» և կրակում մի անգամ, ապա դուրս վազելով կրակում է երկրորդ անգամ և ապա արագութեամբ անյայտանում։ Ներկայ եղողները այնքան են կորցնում իրանց, որ չեն էլ մտածում չարագործին։ Այս ու այն կողմից վազող բանւորները տեսնում են Ներսիսեանին արեան լճի մէջ ընկած, իսկոյն տեղափոխում են հիւանդանոցը, ուր նա սեպտեմբերի 12 ին մեռնում է սարսափելի տանջանքների մէջ։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Սեպտեմբերի 5 ին կայացել է ներքին գործերի մինիստրի խորհրդի նիստը, որտեղ քննութեան են առնվել մի քանի դատաստանական գործեր, որոնցից ամենալուրջն ու հետաքրքրականը Բեժեցկի քաղաքագլխին (Տվերի նահանգ) իր պաշտօնում յանցանք գործելու մէջ մեղադրելն էր, այսինքն անլեգալ սահմանադիր-ռամկավար կուսակցութեանը պատկանելու և Ֆինլանդիայում տեղի ունեցած նոյն կուսակցութեան համագումարին մասնակցելու համար։ «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, քաղաքագլուխ Բռվեակինը մինիստրի խորհրդի որոշմամբ հեռացվելու է իր պաշտօնից։

◆ Ինչպէս յայտնի է, վերջին ժամանակներս աշակերտներին արտադպրոցական հսկողութեան համար ամեն տեղ հրատարակվեցին կանօններ։ «Кiев. Мысль» լրագիրը Վարշավայում մշակված արտադպրոցական կանօններից հաղորդում է հետևեալ բնորոշ կուրիօզը. «Անբարոյականութեան տներ յաճախելը արգելվում է։

«Իսկ դասախօսութիւններ ու ռեֆերատներ այցելելը Թոյլատրվում է ոչ այլապէս, բայց իրանց իշխանութեան Թոյլտւութեամբ»։

Այդ խելը, որ ներկայ դէպքում դրված է իբրև միացնող մասնիկ «անբարոյականութեան տների» ու «դասախօսութիւնների» մէջև—ուղղակի անօրինակ է։

◆ Ֆինանսական հաստատութիւններից մէկի նախահաշուի մէջ, որը ներկայացված է Պետական Դումային, նպաստների ու կենսաթոշակների բաժնում, «Рѣчь» լրագրի ասելով, գտել են հետևեալ ուշագրաւ Թիւը. «400 րուբլի ֆինանսների մինիստրի ուսումնարանական կօմիտէտի անդամ Գուրևիչին»։ Այդպիսով «Россія» պաշտօնական Թերթի խմբագիրներից մէկը—Գուրևիչը՝ «որբերի ու այրիների շարքերը» մտած ստանում է տարեկան 400 րուբլի նպաստ։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 9 սեպտեմբերի *)

Խնդրեմ ճշմարտութիւնը վերականգնելու համար՝ նամակիս մի տեղ շնորհեք ձեր լրագրի մօտակայ համարներից մէկում։

«Մշակի» № 194-ում գետեղելով Ջամակա այրի տ. Աննա Մանուկեանի զաւակին համալսարան մտցնելու հարցի և նրա նիւթական կացի վերաբերեալ, «Մշակի» № 195-ի մէջ խմբագրութիւնդ վիրաւորել է ինձ, որ ես անձնական ստոր հաշիւներ ունենալով յեղաշրջած խառնել եմ մասալը։

Պատիւս շօշափած լինելով ես կրկին անգամ կրկնելով խօսքս՝ ասում եմ, որ տ. Աննա Մանուկեանի գրածը հիմնովին սուտ է։ «Մշակի» 134-րդ համարում ասում է, որ տասներկու տարվայ այրի կին է, մինչդեռ նրա ամուսինը վախճանվել է 1905 թ. (այս կարելի է հեշտութեամբ ստուգել Էջմիածնեցոց եկեղեցու մատեանում՝ Հալաբարում)։

2-դ, նա ասում է, որ սուղ միջոցներով կրթել է իր հինգ որբ զաւակները։ Այդ էլ ճշմարտութեան հիմքից զուրկ է, որովհետև ես եմ հոգացել Թէ նրա զաւակների ուսման վարձը և Թէ կրթութեան մասին. (այս կարող են վկայել Տէր-Յովհաննէս Ամիրխանեանը և Տէր-Ստեփան Սամուէլեանցը և ուրիշները)։

3-դ, որ հարս ու սկեսուր ստացել են 1000 րուբլուց աւելի տարեկան՝ այդ և փաստ է և անհերքելի փաստ. (Ցղնա գիւղի ուսումնարանում տ. Աննա Մանուկեանը 1906 թ. նշանակվելով վարժուհի՝ ստանում էր 500 ր. տարեկան, իր հարսը՝ օր. Աստղիկ Ալավերդեանը [illegible] 500 րուբլի, 1907 թ. տ. Ա. Մանուկեանը Փառակա գիւղի ուսումնարանում ստանում էր 550 ր. տարեկան, իսկ օր. Ալավերդեանը Իկիլջանի ուսումնարանում նոյնպէս 500 րուբլի)։

4-դ, որ տ. Աննա Մանուկեանը ունի երկու քարուկրեայ երկյարկանի սեփական տուն Հալաբարի 7-դ քաղաքամասում՝ մեծ Արարատսկայա փողոցում № 19 (ինչպէս ինքը Աննա Մանուկեանը յայտարարում է «Մշակի» 134-րդ համարում), իսկ միւսը Հալաբարի հանգստարանի (Խօջիվանք) արևմտեան դրան հանդէպի փողոցում, որի №-ը ունի բարեհաճել խմբագրութիւնդ ստուգելու, որոնց եկամուտով շատ հեշտութեամբ նա կարող է իր զաւակը համալսարան մտցնել։

Իսկ ձեզ, պ. խմբագիր, մոլորեցնող արժանահաւատ անձինքը, որոնց ազգանունները խնդրում եմ յայտնել ինձ, եթէ փաստ ունեն, Թող լրագրով պատասխանեն ստութեան դէմ։

Ինչ վերաբերում է տ. Աննա Մանուկեանին, եթէ գրութիւնս ճշմարտութիւնից զուրկ է, Թող օրինական ճանապարհով պատիւ պահանջէ ինձանից։

Երկրպագ կօլլէժսկի ասեսոր՝

Տ. Սայաթ Նովա

Ծ. Գ.—5-դ, որ տ. Աննա Մանուկեանը է պրիկաշչիցա Օբօյեանի խանութում և Շվիդչէնկոյի պրաչէշնիում, որ գտնվում են Պուշկինսկի պասաժում, այդ ևս անհերքելի փաստ է. խմբագրութիւնը Թող բարեհաճէ ստուգէ։

Տ. Ս.-Ն.

—

Էջմիածին, 15 սեպտեմբերի

Երջանկայիշատակ տ. Մկրտիչ կաթողիկոսի մահից յետոյ ս. Էջմիածնի սինօդը մնաց շատ քիչ անդամներով։ Այս ամառ եղան դէպքեր՝ որ հիւանդ և բացակայ անդամների պատճառով անհնարին եղաւ օրինական Թիւով (3 հոգի) նիստ կայացնել, ուստի և փակ մնաց սինօդի ատեանը, որի մասին և պաշտօնապէս յայտնվեց իմ և պ. պրօկուրօրի կողմից բարձրագոյն իշխանութեան։ Մայր Աթոռի եկեղեցական Թանգարանը, ուր հաւաքված են բազմարժէք գոհարեղէններ և հնութիւններ, միշտ բացվում է այցելուների առաջ սինօդական անդամների ներկայութեամբ և երեք տարբեր բանալիներով։

Ամբողջ այս ամառ վերոյիշեալ պատճառով Թանգարանի բանալիները պահված էին ս. Էջմիածնի ներքին գանձարանում, որ կնքված է սինօդի կնքով։ Այս իսկ պատճառով այս վերջին ամիսներս հնարաւոր չէ եղել բանալ Թանգարանը այցելուների առաջ, և այդ յայտնի է բոլոր միաբաններին և այցելուներին։ Բոլորից յարգված ուսուցչապետ պ. Մառը վերջին օրերս հիւր էր Մայր աթոռում, ուր նա եղել է միշտ յարգված և սիրված, ոչ միայն իբրև յայտնի գիտնական, այլ և իբրև Մայր Աթոռի հին և մտերիմ բարեկամ։ Ինձ այցելած ժամանակ պ. Մառը ցանկութիւն չը յայտնեց Թանգարանը տեսնելու մասին (որ քանիցս տեսել է) և միայն նրա ս. Էջմիածնից մեկնելու վերջին օրն, և այն՝ մեկնումից հազիւ մի քանի ժամ առաջ, ներկայացաւ ինձ տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանը, խնդրելով բանալ տաճարի Թանգարանը պ. Մառի և ընկերների առաջ։ Այդ խնդրին բաւարարութիւն տալ բոլորովին անհնար էր, ոչ միայն վերոյիշեալ պատճառներով—անշուշտ պ. Մառի համար կը լինէր բացառութիւն՝ կը բացվէր ներքին կնքված գանձարանը բանալիները հանելու, կը բացվէր և Թանգարանը՝ չը նայելով բոլոր դժուարութեանց—բայց դժբաղդաբար երկու օր առաջ Երևանի ճանապարհին կողոպտված և ծանր վիրաւորված էր գանձապահ Համազասպ վարդապետ Համազասպեանը ու պառկած անկողնում, առանց որի ներկայութեան անհնարին էր բանալ ներքին գանձարանը։ Ահա այս է եղելութիւնը, որից յետոյ հայ հասարակութեանն է մնում գնահատել Գարեգին վարդապետի, որ ծանօթ էր բոլոր հանգամանքներին, այս գործում որոշ միտումներով բռնած ընթացքը։

Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան

*) Ծան. խմբ.—Տպվում է ցենզուրական կանոնադրութեան 139-րդ յօդ. հիման վրա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

16 օգոստոսի

ՏԱՄԲՈՎ։ Պետական Դումայի անդամ ընտրվեց իշխան Պաւել Անդր. Կիլդիշեվ, նահանգական զեմստվօյի անդամ, հողատէր, աւարտել է Ալէքսանդրեան լիցէյը, ուղղափառ։

ՄԻՆՍԿ։ Պետական Դումայի անդամ ընտրվեց Անդրէյ ա. քահ. Իւրաշկէվիչը, միապետական, հոգևոր սեմինարիայի ռեկտոր, բարձր կրթութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կայացաւ բիւջէտային ժամանաժողովի նիստը։ Ներկայ էին 50 անդամներ 66-ից։ Նախագահ ընտրվեց Ալէքսէենկօ, օգնականներ՝ ֆօն-Անրէպ և Իվանօվ, քարտուղարներ՝ Գօդնէվ, Նեկրասօվ և Բերէզօվսկի 2-րդ։

ՄԻՆՍԿ։ Գրական-արտիստիկական միութեան կօնգրէսը որոշեց դիմել պետութիւններին, միջնորդելով, որպէսզի Բեռնի կօնվենցիայի մէջ մտնի մի յօդուած, որով արգելք դրվի արտատպութիւններ անել լրագիրներից, շաբաթաթերթերից, հեռագիրներից և հեռախօսով հաղորդված տեղեկութիւններից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրին հաճելի եղաւ բարձրագոյնս հրամայել ֆինլանդական սէյմին, որ գոյութիւն ունեցող ֆինլանդական երկաթուղագծերի վրա նոր շինութիւններ կառուցանելու համար գումարայնացումները բաժանելու ժամանակ ուշադրութեան առնվի այն բանը, որ անհրաժեշտ է երկաթուղիները այնպիսի դրութեան հասցնել, որ հնարաւոր լինի նրանց վրա աշխատանքի հանել ռուսական գնացքներ, և որ նոր պատուէրներ տալու ժամանակ շոգեմեքենաները լինեն ռուսականի նման։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Ռուսական միութիւնը եռանդով պաշտպանում է այն առաջարկութիւնը, որ ուղղակի նաւագնաց հաղորդակցութիւն հաստատվի շվէդական և ռուսական նաւահանգիստների միջև։

ԲԵՐԼԻՆ։ Պրուսական սահմանագլխում խօլերայի առաջն առնելու նպատակով նշանակված է սանիտարական հսկողութիւն Ռուսաստանից եկող ճանապարհորդների համար։

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ
Հայոց դպրոցների համար
Ա. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ
Լոյս են տեսել

Մոսկվայի ուսուցիչների ժողովածուները I, II, III և IV տարիների համար և Շապօշնիկօվի և Վեալցօվի ժողովածուները V և VI տարիների համար։ Բոլորն էլ փոխադրած և յարմարեցրած հայոց դպրոցների համար։

1. Թւաբանական խնդիրներ և օրինակներ Ա. տարի առանձին գրքոյկով Գ. է 12 կ.
2. Ա. պր. I և II տարի միասին Գ. տպ. 30 կ.
3. Բ. պր. III տարի Գ. տպար. 30 կ.
4. Գ. պր. IV տարի Բ. տպագր. 30 կ.
5. Դ. պր. V տարի 40 կ.
6. Ե. պր. VI տարի 50 կ.
7. Ձեռնարկ Թւաբանութեան 50 կ.

Բոլոր ժողովածուները ընդունված և գործածվում են Թիֆլիսի Ներսիսեան, Երևանի և Շուշու հոգևոր դպրոցներում, ինչպէս նաև Թիֆլիսի և գաւառների բազմաթիւ ծխական և քաղաքային դպրոցներում։

Դիմել Թիֆլիսում՝ «Գուտենբերգ» գրախանութին, Тифлисъ, книж. магазинъ «Гуттенбергъ» և կամ Абасъ-Абадская площадь А. Спарапетяну.

(հ. կ.) 3—1

Կարապետ ծ. վարդապետի
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Մասն Ա. VI+218,
Գինն է 1 ռուբ.
Դիմել Էջմիածին՝ Երուանդ վարդապետին։
(հ. շ. ե.) 5—1

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՍՈՐԻՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ
Ասորակ. եւ հայկակ. աղբիւրների համաձայն
Ուսումնասիրեց
Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց
XII+335 էջ
Գինն է 1 ր. 50 կ.
Դիմել Էջմիածին՝ Երուանդ վարդապետին։
(հ. կ. ե.) 10—1

Վառ. եւ Ստ. Սմբատեանների
Միջնակարգ դպրոցների երկսեռ երեխաների նախապատրաստական ուսումնարանում (Ռոստովից Դ/վ) ընդունելութիւնները սկսված են։ Դասերը սկսվել են սեպտ. 1-ին։ Կայ երկու գիշերօթիկի տեղ։ Ներսիսեան փակված զուգընթաց դասարանի աշակերտներին առանձին զիջում։
Սօլօլակ, փողոց Պասկեվիչի, № 13.
(չ. ու. շ.) 5—4

ԺԱՄԱՑՈՅՑ KAVALIER

Ընդառաջելով գնողների ցանկութեան՝ ունենալ ճիշտ և իսկական ժամացոյց էժան գնով, մենք վճռեցինք տալ 3 ր. 95 կ.-ով տղամարդկանց բաց տափակ ժամացոյց «KAVALIER», վերջին կատարելագործութիւններով ժամացոյցային մեխանիզմի մէջ։ Կորպուսը փայլուն մուգ-կապոյտ գոյնի է։ Ցիֆերբլատը մետաղական ոսկեզօծված կամ արծաթազօծված։ Սլաքների ուղղութիւնը՝ գլխի վրա։ Ընթացքը՝ խնամքով ստուգված, որի մասին տրվում է երաշխաւորութիւն։

Պատուէրները կատարվում են անմիջապէս պահանջը ստանալուց յետոյ։

Առաքման համար վերցվում է գնողներից: Եւրոպական Ռուսաստան 50 կոպ., իսկ Ասիական » 75 կոպ.

Պատուէրներն ուղարկել՝ Торговому дому
Московскій Центральный Складъ Часовъ.
Москва, д. Виноградова № 126.

Ե. Գ.—Կանխավճար ուղարկողներին, դրամով կամ մարկաներով, ձրի տրվում է ժամացոյցի շղթայ տղամարդի կամ կնոջ։
(հ.կ.) 30—17

ՑՔԵՂ ՆՈՐՈՒԹԻՒՆ! ՄԻԱՅՆ 2 ՌՈՒԲԼԻ
(Պատենտ № 8259)
Էլեկտրական տուալետային յղկված հայելի!



արտասահմանեան փայլուն շրջանակով, գեղեցիկ շինված։ Հարկաւոր է մի փոքր հուպ տալ կնոպկան, վայրկենապէս ստացվում է միանգամայն լուսաճաճանչ էլեկտրական լոյս, որը էֆֆեկտով լուսաւորում է հեռու տարածութեան վրա ամբողջ շրջապատը և մթութեան մէջ մանրակրկիտ կերպով անդրադարձնում է հայելու մէջը նայող դէմքի բոլոր գծերը։ Առաջարկվում է որպէս մի անհրաժեշտ առարկայ թէ ննջարանի և թէ բուդուարի համար, և վերին աստիճանի հետաքրքրական է ամեն մի տան համար։ Այդ տեսակ էլեկտրական հայելի՝ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՄՈՒԶԻԿԱՅՈՎ! Նուագում է լարելու միջոցով բարձր ձայնով և երկար ժամանակ ռուսական զանազան գեղեցիկ և ուրախ երգեր, վալսեր, պօլկաներ, քայլերգեր, օպերաներ և ժողովրդական երգեր։ Կամ թէ՝ մուզիկայի փոխարէն—ՃԻՇՏ ԲԱՆՈՂ ԺԱՄԱՑՈՅՑ. Գինը 3 ր. 40 կ.։ Այդ տեսակ էլեկտրական հայելի, սակայն մեծ դիրքով. հետաքրքրաշարժ մուզիկայով եւ ժամացոյցով.—գինը 5 ր. 40 կ.։ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ 6 ՏԱՐՈՎ։ Ուղարկում ենք վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Ճանապարհածախսի համար—ի նկատի չառնելով քանակը—ստացվում է 50 կ., Ասիա և Սիբիր—1 ր.։
Հասցէագրել՝ Складу новостей „Русское Дѣло", 72. Варшава. Главная № 457.
(հ.) 5—2

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն հաշւիչի վրա, 7) Վայելչագրութիւն (ամենայն ձեռքի ուղղում)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։

—ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ—

Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15 ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7։
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ Տ. ՓԻԼՈՅԵԱՆ
(ա. օ.) 20—10

ԿՐՕՆԻ դասագրքեր

	Գինն է ր. կ.	Զեղչ %
Աշակերտաց համար		
1. Առաջին տ. պատկերազարդ.	» 25	25
2. Երկրորդ »	» 20	20
3. Երրորդ »	» 30	20
5. Հին ուխտ պատկերազարդ	» 50	25
5. Նոր ուխտ	» 40	20
6. Գործք առաքելոց	» 40	20
Ուսուցչաց համար		
7. Ուղեցոյց նոր ուխտի	2 5	35
8. Ուսուցումն քրիստ. կրօնի Դ.	1 50	35
9. Ուսուցումն » » Ե.	» 50	35
10. Տասն պատուիրան	» 50	35

Ցանկացողները կարող են դիմել
ա. Магазинъ Г. С. Мясникова—Дворцовая
բ. Գրավաճառանոցներ՝ Գուտտեմբերգ (Թիֆլիսում)
գ. » Կենտրոնական (Թիֆլիսում)
դ. » Թառայեանց (Թիֆլիսում)
ե. » Քեօսէ (Թիֆլիսում)
զ. » Յովհաննիսեան (Երևանում)
է. » Сотрудникъ (Բագւում)
ը. Ինձ դիմողները՝ Тифлисъ, Коммерческое училище, ստանում են 20, 25, 35% զեղչ։ Վճարը երեք ամսից յետոյ՝ պայմանով երաշխաւորութեամբ։
Սահակ ա. ք. Սահակեանց
(հ. շ.) 10—6

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ"
գրավաճառանոցում վաճառվում են Աւետիս Պօղոսեանի հրատարակչական ֆօնդի հետեւեալ հրատարակութիւնները.
№ 1. Պատկերներ կենդանիների կեանքից (պատկերազարդ մանկական) 40 կ.
№ 2. Լ. Ն. Տօլստօյ.—Ժողովրդական պատմուածքներ Ա. պրակ 30 կ.
№ 3. Վիլհելմ Հաուֆ.—Ինքնակոչ իշխանը (պատկերազարդ, մանկական) 10 կ.
№ 4. Լ. Ն. Տօլստօյ.—Ժողովրդական պատմուածքներ Բ. պրակ 20 կ.
№ 5. Փնջիկ, մանկական երգարան եւրոպական նոտաներով, կազմեց Աղատ Մանուկեան 30 կ.
(օ. մ.) 10—3

Հայուհի որոնում է բոննայի կամ տնտեսուհու պաշտօն։ Կարող է բոննա լինել երկու կամ մէկ երեխայի համար։ Հասցէ՝ Алексѣевская ул., № 13, д. Теръ-Галустова. Н. Аскаровой.
(շ. հ.) 2—2

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

Սովորեցնում և պատրաստում են
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1908 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։

Դրամից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул., № 22, ամեն օր։ Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ 20—20
(կ. ե. հ.)

Թիֆլիսի Քաղաքային Ինքնավարութիւնը

յայտարարում է սրանով, որ ի լրացումն գոյութիւն ունեցող պատուաստիչ կենտրոնավայրի—խակախօլերային պատուաստումների համար—որը տեղաւորված է Մալօ-Սուդեբնայա փողոցի վրա, Զուբալօվի անունով հիմնված չքաւորների տանը, հասարակութեանը աւելի մատչելի դարձնելու համար ինքը բաց է արել նորից երեք ստորադրեալ բաժանմունքներ, այն է՝

1) Հաւլաբարի քաղաքային բուժարանին կից—Կախեթինսկայա փող., տուն Տէր-տէրեանի։
2) Կուկիայի քաղաքային բուժարանին կից—Աւճալսկայա փող., տուն Սուլխանեանի։
3) Խարփուխի քաղաքային բուժարանին կից—Վորոնցօվսկայա փող., տուն Եղիգարովի։

Հակախօլերային ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆԵՐԸ կատարվում են ՁՐԻ
կենտրոնական վայրում բժ. Մուխարինսկու ձեռքով, առաւօտեան ժամը 11-ից մինչև ցերեկվայ 2 ժամը, իսկ միւս վայրերում—բժիշկներ Տէր-Նիկողոսեանի, Մովսէսեանի և Շարէյխերի ձեռքով, ժամը 12-ից մինչև 2-ը ցերեկվայ։

Պատուաստումները կատարվում են Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութեան Առանձին Յանձնաժողովի հսկողութեան ներքոյ։
(ա. օ.) 3—2

Ա. ՓՈՐՍՈՒՂԵԱՆ

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ Ա. տարի 25 կ.
» » » » Բ. » (հիմ. բարեփոխված) 25 »
» » » » Գ. » (հիմ. բարեփոխված) 25 »

Այս դասագրքերը կազմված են կենտրոնական ժողովում ընդունած ծրագրի համաձայն։ Բարեփոխութեան ենթարկված՝ փորձված ուսուցիչների ցուցմունքով։ Ընդունելութիւն են գտել շատ աչքի ընկնող դպրոցներում, պետական և ծխական։

Գլխաւոր պահեստները՝
Կարսում մօտ—Карсъ, А. Порсугянъ.
Թիֆլիսում—«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», կենտրոնական և «Փարոս» գրախանութներում։
Ախալքալաք—Տօնական Տօնականեանի մօտ։
Ալէքսանդրօպօլ—Գէորգ Ստեփանեանի մօտ։
Գրավաճառներին ձեռնտու պայմաններ։ 10—10

1865 թ. 1870 թ. 1882 թ. 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

1860. Т.Р.А.Р.М. С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականները միայն այս դրօշմով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌԵԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ
ԸՆԿ. Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
լաւ յատկութեան համար

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԸ կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՑՇԵԼԼԵՐ"
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՄՈՍԿՎԱՅՈՒՄ, ՌԻԳԱՅՈՒՄ, ԿԻԵՎՈՒՄ, ՎԻԼՆԱՅՈՒՄ, ԽԱՐԿՕՎՈՒՄ, ՕԴԵՍՍԱՅՈՒՄ, ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ, ԿԱԶԱՆՈՒՄ, ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿՈՒՄ, ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ, ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՏԱՇԿԷՆՏՈՒՄ, ՍԱՐԱՏՕՎՈՒՄ, ՊԵՐՄՈՒՄ

Նիժեգօրօդեան և Իրբիտեան տօնավաճառներում
(հ. կ.) 50—13